

**ԵՐԵՔ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐ**  
**ՄԵԾՆ ՄՈՒՐԱՏԻ ԱՔՍՈՐԷՆ ՓԱԽՈՒՍՏԻՆ**  
**ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ**

ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ  
jerejianyeghia@hotmail.com

Հայ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դերերեն Մեծն Մուրատի (Համբարձում Պոյաճեան, Հաճրն, 1867-1915, կախաղան հանուած Կեսարիա), կեանքին հանգրուաններուն էական զիծերը, ծանօթ են բոլորին: Անոր փոթորկոտ կեանքին ամենէն չուսաբանուած մասը կը մնան Ափրիկեան Թրիփոլի (Թարապլոս Ալլարպ, Լիպիա) աքսորի տարիները՝ 1896-1906, յատկապէս՝ աքսորավայրէն փախուստին պարագաներն ու մանրամասնութիւնները:

Վերջերս, ՄԴՀԿ արխիւէն յայտնաբերեցինք նամակներ որոնք կ'անուչուին Մուրատի աքսորին եւ փախուստի համար ձեռք առնուած միջոցներուն: Անոնք գրուած են ՄԴՀԿ Կեդր. Վարչ. կողմէ, ուղղուած՝ Նշան Տումանեանին<sup>1</sup>, Վահան Քեհեայեանին<sup>2</sup> եւ նոյնիքն Մուրատին: Թէեւ նամակները փախուստին ամբողջ պարագաները չեն բացայայտեր, սակայն, այս հարցով կը ներկայացնեն պատմական որոշ շահեկանութիւն: Նամակներուն մէջ կան ծածկագիր խօսքեր, ոչ-այնքան հանրայայտ անուններ:

1894 Օգոստոսին, Սասնոյ Ա. Ապստամբութեան պետը՝ Մուրատ, Տալուորիկի մօտ Ֆրոֆրոքար կոչուած լեռան վրայ գտնուող քարայրի մը մէջ, խումբ մը զինակիցներով (որոնց կարգին՝ Գեորգ Չաուշ, Քոլոզ-Յովհաննէս Կիրակոսեան<sup>3</sup>, Աւօ - Աւետիս Գասպարեան<sup>4</sup>, Խաչիկ Տվիեան, Գասպար, Ադամ, Կարապետ եւ Սենեքերիմ), կը պաշարուի: Քրտական մեծաթիւ ուժերու դէմ երկօրեայ կռիւներէ ետք ֆետայիներուն սնունդի պաշարն ու փամփուշտը կը սպառի: Կը ստիպուին անձնատուր ըլլալ:

Դէպքերու այս մասն ու յետագայ ընթացքը նկարագրուած են երկու մասնակիցներու կողմէ. Ա՝ ուղղակիօրէն՝ Գեորգ Չաուշի ձեռամբ<sup>5</sup>, Բ՝ Աւոյի կողմէ՝ պատմուած Սեպուհին (Արշակ Ներսէսեան)<sup>6</sup>:

Ձերբակալուածները կ'ենթարկուին ծեծի, կը տարուին Սեմալ եւ կը յանձնուին բանակին: Հոն եւս չարչարանքներու ենթարկուելէ ետք կը տարուին Մուշ: Հոս եւս չարչարանքներ յատկապէս Մուրատին հանդէպ: Չարչարանքներու տակ Սենեքերիմ կը մահանայ բանտին մէջ: Կը տարուին Բաղէշ: «*Բայց Բաղէշի մէջ Մուրատը շատ չարչարեցին, մինչեւ անգամ պէխերը մկրատով կտրեցին, ջուրի տեղ քարիւղ խմցուցին, 24 ժամ շարունակ ոտքի կանգնեցուցին: Այս տանջանքներէն յետոյ Մուրատը հիւանդացու ամբողջ մէկ ամիս*»<sup>7</sup>: Բաղէշի մէջ տեղի կ'ունենայ դատավարութիւնը: Մուրատ, որ նախապէս, որպէս 1890 Յուլիս 15ի Գում Գափուի

ցոյցին զլիաւոր կազմակերպիչներէն մին ի բացակայութեան դատապարտուած էր ցկեանս բանտարկութեան, բնականաբար կը դատապարտուի մահապատիժի: Արտաքին միջամտութիւններու հետեւանքով վճիռը կը փոխուի ցկեանս աքսորի: Միւս ապստամբները կը դատապարտուին 5-15 տարուան բանտարկութեան: 1895 Ապրիլ 10ին, ձերբակալեալները վերստին կը տարուին Մուշ: Նոյն ամիս անոնք կը հարցաքննուին Ֆրանսայի, Ռուսիոյ եւ Անգլիոյ փոխ-հիւպատոսներուն կողմէ, որոնք չորս թուրք բարձրաստիճան պաշտօնատարներու հետ կը կազմէին Մասնոյ ջարդերուն «Քննիչ Յանձնախումբ»ը:

Գ.Չաւուշի համաձայն, ձերբակալուածները փախուստի մասին կը սկսին մտածել 1895 Ապրիլէն սկսեալ: Իր կողմէ նախաձեռնուած առաջին փորձը՝ 1895 Սեպտեմբերին, կը բացայայտուի եւ կը ձախողի: Երկրորդ փորձը կը նախապատրաստուի Նոյեմբերին, սակայն Մուրատ կ'արգիլէ այդ, գտնելով թէ «այժմ ձիւն է դուրսը, թող որ գետիններն սեւանան, թէ ոչ չենք (sic) կարող ազատուիլ»: Երրորդ փորձը կը յաջողի եւ չորս ընկերներ՝ Գ.Չաւուշ, Քոլոզ, Աւօ եւ Խաչօ փախուստ կու տան բանտէն: Այս մասին Աւօ կը պատմէ՝ «Մուրատ կը մերժէր փախչելու առաջարկը պատճառներ առաջ բերելով եւ խորհուրդ կու տար Գէորգին որ ինք փախչի, եթէ վստահ է թէ պիտի յաջողի: Կտրիճը շատ խնդրեց ու թախանցեց, որ միասին ըլլայ Մուրատն ալ, սակայն Մուրատ չհամաձայնեցաւ: Եւ տեսնելով որ համոզելն անկարելի է, Գէորգը սկսաւ գործի»<sup>8</sup>: Մուրատ ինք եւս, որ իր մասին խօսելու սովորութիւն չունենալու պատճառով դժբախտաբար ոչ մէկ յուշ ձգած է իր յեղափոխական անցեալին մասին, Գ. Չաւուշի նահատակութեան առիթով գրած մահախօսականին մէջ, անդրադառնալով այս հարցին, կը գրէ՝ «Օր մը Ադամը երկտող մը հաս/ց/ուց ինձի, որուն մէջ դրած էր Գէվօի գրածը. «Տէր, ուղղեալ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան...»: Այդ կարճ խօսքը շատ որոշ էր, կասկած չկար որ Գէվօն կ'ուզէր «ֆրլորթիլ» (փախչիլ) բայց անյարմար էր: Նա իսկոյն եւեթ համոզուեցաւ, որ յօգուտ ընկերներուն, պէտք էր համբերել եւ սպասել, աւելի յարմար ըռպէին՝ ամէնքս միասին դուրս գալու համար: Բայց յետոյ՝ գործերը այնպէս բերին որ միայն երեք ընկերներ, որոնց հետ եւ Գէվօն, Մշոյ բանտի (գօրանոց) պատը ծակելով փախան, 1896 Մարտ 27-ի գիշերը, կռուելով բնութեան սաստկութեան դէմ»:


Փախուստէն ետք, Գ.Չաւուշ իր ինքնակենսագրութեան մէջ կը գրէ. «Մեզմէ վերջ Մուրատ տարի մըն ալ Մուշ մնաց ու յետոյ կառավարութիւնը զայն աքսորեց»: Այստեղ, ակնարկուած «տարի մըն ալ»ը, անհրաժեշտ չէ բառացիօրէն հասկնալ: Փաստը այն է, որ 1896ին, Մուրատ Մշոյ բանտէն, Տրապիզոնի վրայով կը տարուի Պոլիս եւ որոշ շրջան մը հոն բանտարկուած մնալէ ետք կ'աքսորուի Ափրիկեան Թրիփոլի:

Մինչև վերջերս կար այն տպաւորութիւնը, թէ արքայի շրջանին Մուրատի հետ կապը կը խզուի, թէև ՄԴՀԿ 5րդ Համագումարը (Փարիզ, 1905 Սեպտ.), արքայազն Մուրատը կ'ընտրէր Կուսակցութեան Կեդր. Վարչութեան անդամ: Սա, հայ ազգային-ազատագրական պայքարի պատմութեան միակ դէպքն է, երբ արքայի մէջ գտնուող յեղափոխական մը կ'ընտրուի կուսակցութեան գերագոյն մարմնին անդամ: Եթէ սա մէկ կողմէ ցոյց կու տայ Կուսակցութեան յարգանքն ու վստահութիւնը Մուրատին հանդէպ, միւս կողմէ նաեւ կ'ապացուցէ Համագումարին վստահութիւնը անոր արքայութեան ազատման մասին: Ուրկէ՞ կու գար այս վստահութիւնը:

Նախ ըսենք, որ Մուրատ, այդ շրջանին, հայ ազգային-ազատագրական շարժման ամենէն ժողովրդական դէմքն էր: Անոր հանդէպ համակրանքը համընդհանուր էր եւ անոր ազատութեան անկեղծօրէն կը ձգտէին անխտիր բոլորը: Այս կապակցութեամբ բերենք միայն երկու օրինակ: ՀՅԴաշնակցութեան հիմնադիրներէն Ռոստոմ, ՀՅԴ Արեւմտեան Բիւրոյին յղած իր նամակին մէջ (1900, հաւանաբար Սեպտեմբերի սկիզբ) կը գրէ. *«Պոլսից գրում են. - Մուրատի քովէն մարդ էր եկեր, որ նորէն հոն գնաց. Մենք միջոց ունինք իրեն նամակ հասցնելու: Այժմ 25ամեակի առթիւ անոր անունն ալ Պատրիարքարանի ներկայացնելիք ցանկին մէջ խոթել տուինք: Գրէ-հարցուր, թէ արդեօք կրնա՞ն անոր համար 40-50 ոսկի գործադրել կալանքի-փախուստի համար եւայլն... այսինքն ունի՞ն արդեօք այդչափ գումար»:* Այս տողերը խնդրում են գրել Եզիպտոս»<sup>10</sup>:

Վերեւ ակնարկուած «25 Ամեակը», շատ հաւանաբար կը վերաբերի սուլթան Ապտուլ Համիտի գահակալութեան 25ամեակին: Նման առիթներով սովորութիւն էր ներումներ շնորհել քաղաքական բանտարկեալներուն, որուն համար Պատրիարքը հայ քաղաքական բանտարկեալներու անուանացանկ մը կը ներկայացնէր սուլթանին: Պատրիարքական այդ դիմումագրին մէջ կը նշուէր թէ խնդրոյ առարկայ յեղափոխականները սխալած էին, անոնք կը գոջային, սուլթանին արեւշատութիւն կը մաղթէին եւ նման բաներ: Օրինակի համար, Մուրատի զինակից Միհրան Տամատեան, որ անոր նման յեղափոխական շարժման միացած էր Պոլսոյ մէջ եւ Մուրատէն առաջ Սասուն հասնելով շուրջ տարի մը մինակը զլիսաւորած Սասնոյ յեղափոխական շարժումները, այսինքն՝ ըստ էութեան Մուրատին չափ «վտանգաւոր» անձ մըն էր, Սուլթանի գահակալութեան 20ամեակին, իր ձեռքակալութենէն հազիւ տարի մը անց, նոյնքան «վտանգաւոր» չորս այլ հնչակեան յեղափոխականներու հետ, սուլթանական ներումով ազատ կ'արձակուի<sup>11</sup>: Իսկ ինչո՞ւ ներման այդ «շնոհք»ին Մուրատ չէր արժանանար: Այս մասին ուշագրաւ տեղեկութիւն մը կը փոխանցէ փարիզեան *La Petite Republique* թերթը, երբ յետագային, Մուրատի ազատման առիթով տպած «Հայ Հերոս Մը Տասնմէկ Տարի Թրքական Բանտին Մէջ» յօդուածին մէջ կը գրէ. *«Թուրք կառավարութիւնը նրան մի-*

ջոցներ է տուել Մուլթանին դիմել ու շնորհ խնդրել, բայց Մուրատ վեհանձնութեամբ մերժել է, որովհետև նա ցանկանում է սպրել իր կուսակցութեան և իր երկրի ազատութեան համար»<sup>12</sup>:



Այլ պարագայի մը, 1903ին գաղտնի պայմաններով Կարսի մէջ գումարուած ՄԴՀԿ «Անդրկովկասի Եւ Ռուսաստանի Մասնաճիւղերու Պատգամաւորական Ժողով»ը, իր երկրորդ օրուան Գ. նիստին որպէս առաջին օրակարգ կը քննարկէ Մուրատի ազատ արձակման հարցը ու կ'որոշէ ամէն միջոց ի գործ դնելով յաջողցնել այդ. այս հարցին համար կը քուէարկուի յատուկ պիւտճէ և մասնաճիւղերուն հրահանգ կը տրուի մասնակցիլ այդ պիւտճէի գոյացման<sup>13</sup>: Վերոնշեալ ժողովը և անկէ բխող մարմինը «Հնչակեան Կուսակցութեան Անդրկովկասի Եւ Ռուսաստանի Գործադիր Մարմին», ՄԴՀԿ կազմակերպական կառոյցին մաս կը կազմէին: Անոնց անունները, ինքնըստինքեան կը յուշեն անոնց գործունէութեան տարածաշրջանը: Այդ սահմաններէն դուրս ինկող հարցի մը մասին անոնք որոշումներ կայացնելու իրաւունք չունէին: Առաւելագոյնը, կրնային այդ մասին իրենց կարծիքը փոխանցել Կեդրոնական Վարչութեան: Սակայն, Մուրատի ազատութեան հարցը այնքան սրտամօտ էր, այնքան փափաքելի, որ կը գլեր կուսակցական ներքին կանոնադրութեան բոլոր ըմբռնումները:

Մուրատի ազատագրութեան համար մասնակի բոլոր աշխատանքները համադրելու և խաչաձեւումներէ խուսափելու համար, ՄԴՀԿ Դ. Համագումարը (Լոնտոն, Սեպտ. 1903), կը քննարկէ հարցը և իր 14րդ որոշումով այդ խնդրին հետապնդման միակ իրաւասութիւնը կու տայ նորընտիր Կ. Վարչութեան<sup>14</sup>:

Այդուհանդերձ, ե՞րբ, ինչպե՞ս եւ որո՞նց միջոցով իրականացած է Մուրատի փախուստը: Ստորեւ հրատարակուող անտիպ նամակները նոր լույս կը սփռեն այդ հարցերուն մասին:

Նամակները կը տրուին լեզուական մանր սրբագրումներով. պահպանուած է անոնց ոճային հարազատութիւնը:

Ա.Թ. 44<sup>5</sup>

5 Մայիս 1902

*ՆԱՄԱԿ Պ. ՆՇԱՆ ՏՈՒՄԱՆԵԱՆԻՆ*

*Միրելի Հայրենակից,*

*Յաջորդաբար ստացանք ձեր Մարտ 31, Ապրիլ 2, Ապրիլ 7 եւ Ապրիլ 10 (վերջինս բաց նամակ) նամակները<sup>16</sup>, իրենց ներփակեալներով հանդերձ, որոնք բոլորն էլ կարդացինք ամենամեծ հետաքրքրութեամբ եւ ուշադրութեամբ: Ստացանք նաեւ պ. Վահան Քէհեաեանի<sup>17</sup> վերջին երկու նամակները, ի պատասխանի մեր մի նախորդին, որոնք կարդացինք նոյնպէս եւ ուշադրութեամբ: Այդ բոլոր նամակների ընթերցումը, մանաւանդ պ. Քէհեաեանի երկու նամակների ընթերցումը, մեզ տուաւ լիովի ծանօթութիւն այն բոլոր եղելութիւնների մասին, որոնք դարձած են մեր պաշտելի հերոս Մուրատի ազատութեան խնդրի շուրջը: Խնդիրը այնքան կարեւոր եւ փափուկ է որ անհրաժեշտ էր որ Գործ. Յանձնախումբս, իւր կողմից նոր բան կարգադրելուց առաջ, ինչպէս կարող էք հասկանալ ինքներդ էլ, խնդրոյն բազմակողմանի ծանօթանար, միեւնոյն ժամանակ եւ որքան կարելի է՝ մօտիկ եւ կատարեալ կերպով ճանաչէր խնդրոյն մէջ գործող բոլոր անձերը, ցրուէր, փարատէր յանիրաւի յայտնուած կասկածները այս կամ այն անձի նկատմամբ, կամ ստուգէր եւ ճշդէր այդ կասկածները, եթէ արդարացի են յայտնուած նրանք, եւ վերջապէս ուղղէր, վերացնէր սխալներ ու թիրիմացութիւններ, որոնք միշտ կարող են գործուիլ անգիտութեամբ, թէեւ ուղղամտութեամբ: Ձեր առաջին նամակից մենք տեսանք որ մեր նամակը ձեր վերայ խիստ մեծ ազդեցութիւն է ունեցել եւ ձեզ բոլորովին իզուր յուզել ու վրդովել է: Մենք մեր այդ նամակը գրեցինք ձեզ առանց որեւէ կասկածի նշոյլն իսկ ունենալու ձեր մասին, այս շատ պարզ է. եւ մեր նամակի մէջ էլ ոչ մի կէտ չի կարելի գտնել, որ ցոյց տայ թէ մենք մի րոպէ կասկածած լինենք ձեր անկեղծութեան, ձեր ուղղամտութեան վե-րայ: Բայց մեզ համար մուշ լինելով պ. Վահանի անձնաւորութիւնը, մա-նաւանդ այդ մասին կասկած էլ յայտնուած լինելով ուրիշ կողմից, կար-ծեցինք թէ կարող էիք անգիտակցօրէն ընկած լինել մի անպիտանի ձեռքը, ուստի եւ առաջին պարտք համարեցինք մեզ գրել ձեզ եւ դնել ձեր առաջ այդ կէտը, որպէսզի տայիք մեզ այդ մասին հարկաւոր բացատրութիւնները: Այստեղ արդէն վրդովուելու, յուզուելու, ինքն իրանից դուրս գալու ի՞նչ հարկ կայ. չէ՞ որ հենց այսպիսի խնդիրների մէջ է որ մեզանից ամէն մէկը պէտք է աշխատի որքան կարելի է ստոնային լինել, չկորցնել իրեն: Կարծում ենք*

որ դժուար չէ ձեզ հասկանալ որ, ինչպէս վերեւ ասացինք, կեդրոնիս սրբազան պարտականութիւնն է, որեւէ քայլ առնելուց առաջ, ամէն ինչ քննել, պարզել, բացատրել, ուղղել եւ անել այն բոլորը, որը պահանջում է գործի նպատակը: Մենք էլ գրելով ձեզ մեր առաջին նամակը՝ դրանից զատ ուրիշ նպատակ չունէինք: Եւ մենք, պէտք է ասենք, գոհ մնացինք մեր ստացած արդիւնքից: Բացի նրանից որ ահագին տեղեկութիւնների պաշար ստացանք, հապա եւ գործող դէմքերը ատելի որոշ գծերով ու գոյնէ[րով] նկարուեցան մեր առաջ:

Պ. Վահանի նամակները մեր վերայ շատ լաւ տպաւորութիւն թողուցին: ...Եւ մենք կարծում ենք Մուրատի փախստութեան գործին մէջ նա ամենաօգտակար անձնաւորութիւններից մէկը պէտք է լինի...

Ինչ վերաբերում է պ. Ջեանկիւլեանի<sup>8</sup> գրածներին, ձեռք բերուած տեղեկութիւնները բաւականաչափ լոյս սփռեցին նրանց վրայ, այնու ամենայնիւ մենք էլի միջոցներ ձեռք կ'առնենք կատարելապէս պարզելու եւ այդ խնդիրը: Դուք, խնդրում ենք, այլեւս հանդարտ պահեցէք ձեզ, իզուր մի վրդովացէք: Վրդովուելով ու յուզուելով չենք կարող խնդիրները լուծել, այլ, որքան կարելի է, հանդարտ եւ սառն դատելով ու քննելով:

Ընդունեցէք մեր յարգանքները  
Հ.[նչակեան] Կ.[ուսակցութեան]  
Գործ.[աղիք] Յանձնախումբ<sup>9</sup>

\*Այն նամակները, որոնք ուզում էք որ յետ դարձնենք ձեզ, կ'ուղարկենք կարճ ժամանակին:

Բ.Թ. 45

5 Մայիս 1902

Նամակ պ. Վահան Քէհեաեանին

Միրելի Հայրենակից,

Ձեր երկու՝ Ապրիլ 7 եւ Ապրիլ 14 թուակիր նամակները ստացանք: Նրա նկատմամբ տրուած ընդարձակ ու մանրամասն տեղեկութիւնները մեզ վերին աստիճան ուրախացրին ու գոհացրին: Խնդրում ենք որ դուք իզուր չվրդովուիք այն կասկածների համար, որոնք դրել ենք մեր առաջին նամակին մէջ: Դուք շատ լաւ կարող էք հասկանալ որ մեր ամենասուրբ պարտականութիւնն է, շատ լաւ եւ շատ մօտիկ ճանաչել այն բոլոր անձնաւորութիւնները, որոնց հետ մենք գործ ունինք եւ որոնց ձեռքով ուզում ենք բժշկել մեր սիրելի, մեր թանկագին հիւանդ բարեկամը<sup>20</sup>: Այսպիսի փափուկ գործերի մէջ եփուած ու փորձուած մարդը սովորած պէտք է լինի իզուր չտանջելու իրեն այնպիսի կասկածների համար, որոնց արժանի չլինելը գիտի ինքը եւ որոնց ցրուելը եւ մի կողմ նետելը, հիմնուելով գործնական ապացոյցների վերայ, միշտ իրա ձեռքն է: Կրկնում ենք, մենք շատ գոհ մնացինք կարդալով ձեր տուած տեղեկութիւնները եւ խնդրում ենք կրկին ձեր նամակները անպակաս անէք եւ տաք մեզ նորանոր տեղեկութիւններ: Մենք նրան էլ ենք գրում այս անգամ, ձեր ցանկացած

ձեռով: Աշխատեցէք կարելի եղածին չափ շուտով եւ զգուշութեամբ հասցնել նրան եւ ստանալով պատասխանը՝ ուղարկել մեզ: Առ այժմ այսչափ:

Ընդունեցէք մեր յարգանքը  
Գ.[ործադիր] Յանձնախումբ  
5 Մայիս 1902

Գ.Թ.46

Նամակ Մուրատին

Միրելի եւ թանկագին Մուրատ,

Չենք իմանում, կարո՞ղ էք արդեօք երեւակայել թէ որքան գոհութիւն, որքան ուրախութիւն ունինք այս բուպէին, երբ մտածում ենք որ վերջապէս կարելիութիւն եղաւ ուղղակի ձեզ հետ յարաբերութեան մտնել, ձեզ հետ դէմ առ դէմ խօսել: Բայց մենք չենք ուզում եւ չենք էլ կարող հոսանք տալ մեր բոլոր զգացումներին, որոնք շարժում են մեր մէջ այս առիթով, այս գեղեցիկ ու վաղուցհետէ ցանկացուած ու սպասուած արդիւնքին համար: Բացի նրանից որ անկարող ենք զգում մեզ այդ անելու, հապա նաեւ կարծում ենք որ դուք ինքներդ էլ այժմ լինելով հիւանդ<sup>21</sup> չէք կարող տանել նրանց: Իսկ երբ մի օր կ'առողջանաք - եւ այդ օրը, յոյս ունինք, կը գայ անպատճառ - այն ժամանակ, ինչ տարակոյս, դուք աւելի ուժ կ'ունենաք ընդունելու նրանց: Առ այժմ դուք էլ մեզ հետ բաւական եղէք վայելելով այս ուրախութիւնը, որ մինակը ահագին է մեզ համար, ինչպէս նաեւ ձեզ համար, իհարկէ:

Մենք շատ եւ շատ ցաւում ենք, սիրելի, որ ձեր հիւանդութիւնը կարծուածից աւելի երկար տևեց եւ ուրիշ բան չենք մտածում այդ առթիւ, բայց եթէ օր առօր ձեզ բժշկուած ու դարմանուած տեսնել այդ հիւանդութիւնից: Առ այժմ անկարող լինելով դեռ ձեր այդ անգութ ցաւին հաստու դեղ ու դարման գտնել, մենք ամրացնում ենք մեզ այն յոյսով ու հաւատքով որ դուք ձեր բարձր, տոկուն, հաստատուն ու արի բնատրութեամբ կը շարունակէք անընկճելի մնալ այդ հիւանդութեան ձեր վերայ կատարած ճնշման տակ, մինչեւ մի օր հմուտ բժշկների յանձնուելով՝ բոլորովին ազատուիք այդ երկարատեւ եւ մաշող հիւանդութիւնից եւ մեր հոգատարութեան վերայ դուք ապահով եղէք: Մենք քեզ երբեք չենք մոռանում:

Ձեզ ուրախացնելու համար ասենք որ մեր գործերը շատ յաջող վիճակի մէջ են այժմ, մանաւանդ նրանից յետոյ՝ երբ երկու Հ. եղբայրները<sup>22</sup>, որոնք մի ժամանակ կռուած եւ բաժանուած էին իրարից, միացան բոլորովին եւ մի մարմին կազմեցին:

Խնդրում ենք, թանկագին բարեկամ, բարի եղէք ձեր նամակով պատասխանելու մեր մի քանի հարցումներին. 1. Ի՞նչ է ձեր կարծիքը պ. Վահանի մասին, արդեօք կարելի է նրա հետ առեւտրակաւ<sup>23</sup> յարաբերութիւններ անել, վստահելի՞ մարդ է: 2. Արդեօք դուք ձեր հին բարեկամներից մէկին, պ. Ջհանգ.ին<sup>24</sup> նամակ գրա՞ծ էք, եւ եթէ այո, ի՞նչ էք գրել ձեր

հիւանդութեան եւ նրանից բժշկուելու միջոցների մասին: Արդեօք գանձատ յայտնա՞ծ էք մի քանի բժիշկների գործ դրած բժշկական մեթոտների մասին: Արդեօք հաւատք չէ՞ք ունեցած որ այդ մեթոտները գործ դրուած լինեն ուղղամտութեամբ, ձեր առողջութեան համար եւ ոչ թէ ձեզ աւելի վնասելու եւ փճացնելու համար. այդ բանի մէջ ո՞րն է ճշմարտութիւնը ձեր կարծիքով. մենք շատ կ'ուզենայինք գիտնալ այդ: 3. Վերջապէս ի՞նչ է ձեր սեփական կարծիքը ձեր հիւանդութեան բժշկութեան միջոցների մասին, գուցէ դուք աւելի լաւ գիտնաք, նախ որ դուք էլ դոկտոր էք<sup>25</sup>, եւ երկրորդ որ երկարատեւ հիւանդութեան ենթակայ եղած լինելով՝ կը յուսանք թէ աւելի փորձառու եղած կը լինէք այդ մասին: Ի՞նչ ուղղութեամբ, ի՞նչ մեթոտով գործելը աւելի օգտակար եւ նպատակայարմար կը կարծէք դուք:

Ահա այս հարցերն են որ ուզեցինք ձեր առաջ դնել, սիրելի եւ թանկագին բարեկամ, եւ խնդրում ենք որ միտումի, ճշտութեամբ նրանց պատասխանները գրէք մեզ, եթէ միայն այդ նեղութիւն չի պատճառի ձեզ: Առ այժմ այսքան բաւական համարելով՝ վերջացնում ենք մեր նամակը եւ խնդրում ենք որ դուք ձեզ լաւ պահէք, ամուր կենաք, եւ մանաւանդ, երբեք յոյսերնիդ չկտրէք բժշկուելուց մի օր ձեր հիւանդութիւնից:

*Ընդունեցէք մեր ջերմ համբոյրները<sup>26</sup>*

Մուրատը ազատելու բոլոր ճիգերը, մինչեւ 1906, կը ձախողին ցանկալի արդիւնք մը տալէ: Ստոր անուղղակի բացատրութիւն մը կու տայ *La Petite Republique*ը իր վերոյիշեալ յօդուածին մէջ. «11 տարի բանտերում մնալուց յետոյ պատժի նոր մեղմացում ստանալով սկսեց բնակուել բանտից դուրս ոստիկանութեան հսկողութեան տակ, որին մոլորեցնելով կարողացաւ փախչիլ եւ ապաստանիլ Փարիզում»<sup>27</sup>: Այսինքն, Մուրատ, արքայազանին մէջ իսկ, շուրջ տաս տարի կը մնար բանտարկուած, որն ինքնաբերաբար կը դժուարացներ իր փախուստը: Տխուր եւ անցանկալի այդ վայրին մասին, Գ.Չաուշին նուիրած իր մահախօսականին մէջ կը գրէ. «Բանտը եւ անոր տաժանելի պայմանները առաջին փորձաքարն է մարդուս իսկութիւնը դուրս հանելու: Շատ քիչեր կը մնան նոյնը, ինչ որ էին դուրսը: Տեսնք որ շատ հսկաներ տկարացան եւ կամքեր թուլացան աներեւակայելի չարչարանաց...»<sup>28</sup>: Իրաւ ալ, այդ շրջանին, առ նուազն երկու հոգի՝ Մարգար Մովճեան (Մուրատի զինակիցը Պոլսոյ յեղափոխական շարժումներուն մէջ) եւ Կարապետ Մարլեան (յեղափոխական շարժումներուն օժանդակած աստանացի ծերունի մը), կը մահանան արքայազաններուն չորիմանալով:

Իսկ արքայազանին իր մենարանէն դուրս գալէն ետք, ինչպէ՞ս եղած է Մուրատին փախուստը: Այս մասին, մեր իմացութեան սահմաններուն մէջ, կայ գրաւոր երկու կարծիք:

Պետրոս Տեփոյեան կը գրէ. «Աքսորակից Յակոբ Բսկենտերեանի»<sup>29</sup> (Եւրոկիացի) արտակարգ հնարամտութեան մը շնորհիւ նաւակով մը հեռացած էր Մուրատ Ափրիկեան Տրիփոլիսէն եւ հազիւ մէկ քանի ժամ Միջերկրականի վրայէն թիավարած՝ հանդիպած են նաւու մը որ զիրենք առնելով տարած է Մարսէլ»<sup>30</sup>:

Այլ վարկածի մը համաձայն, որ աւելի հաւանական կը թուի, հնչակեան հին յեղափոխական Մուսա՝ Մովսէս Նահապետեան<sup>31</sup>, արքայակից կ'ըլլայ Մուրատին: Ան, Պուլկարիոյ Ֆիլիպէ քաղաքը բնակող իր ընկերոջմէն՝ Մինաս Նալչաճեանէն, պարբերաբար օգնութիւն կը ստանայ, որմէ բաժին կը հանէ նաեւ Մուրատին, երբ վերջինս դեռ կը գտնուէր արքայակարի բանտին մէջ: «Ընկեր Մ. Նալչաճեան կը կրկնապատկէ իր օժանդակութիւնը, որպէսզի կարենան երկուքը միասին փախուստ տալ արքայակարէն, ինչ որ տեղի կ'ունենայ 1906 Ապրիլին, Փարիզի Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնի ղեկավարութեամբ»<sup>32</sup>:

1906 Մայիսին, Հնչակ պաշտօնապէս կը ծանուցէ Մուրատի ազատութեան լուրը, որ հայկական բոլոր շրջանակներուն եւ մամուլի օրկաններուն կողմէ կ'ընդունուի անխառն ուրախութեամբ:

#### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Մեր բոլոր փնտրտութիւնները՝ յատնաբերելու Նշան Տումանեան անձին ինքնութիւնը, անցան ապարդիւն: Ակներեաբար ան արքայական մը չէ եւ մինչ այդ անձանօթ մը Կեդր. Վարչութեան:
- 2 Վահան Քէհեանեան. ծնած Ուրֆա, 1872ին: «Վեհոզի, պարկեշտ, անձնուէր երիտասարդ մը» «կանուիսէն կը մտնէ Հնչ. Կուսակցութեան մէջ եւ գործօն դեր մը կ'ունենայ» 1895ին կը դառնայ Ուրֆայի ինքնապաշտպանութեան գլխաւոր կազմակերպիչներէն եւ առաջնորդներէն մին: Կը ձերբակալուի եւ կ'աքսորուի Ափրիկեան Թրիփոլի: Օսմանեան Սահմանադրութեան հոչակումին, ազատ արձակուելով կը հաստատուի Պոլսոյ Սամաթիա թաղամասը, ուր կը շարունակէ իր կուսակցական գործունէութիւնը: Որպէս վարպետ ձուլագործ, իշխանութեան կողմէ կը դրկուի Զէյթունի Պրունիի զինագործարանը: 1914 Սեպտեմբերին, Անկախ Հայաստան կերտելու ամբաստանութեամբ, հնչակեան գործիչներու կարգին կը ձերբակալուի եւ բանտակից կ'ըլլայ Քսաններուն: Փաստերու անբաւարարութեան պատճառով ազատ կ'արձակուի: Կրայ հասած Մեծ Եղեռնի օրերուն դարձեալ կը ձերբակալուի եւ կ'աքսորուի Չանդըրի: Դանիէլ Վարուժանի, Ռուբէն Սեւակի, Օննիկ Մաղաճեանի եւ հացագործ Արթին աղայի հետ դաժանօրէն կը խողխողուի (Թեոդիկ, *Յուշարձան Ապրիլ (11) Քսանչորսի*, Պէրուր, Տպ. Թեքնոփրէս, 1985, էջ 32. նաեւ՝ Հմայեակ Արամեանց, *Դէպի Կախաղան*, Պոլիս, 1918, էջ 32. նաեւ՝ Արամ Սահակեան, *Դիւցազնական Ուրֆան Եւ Իր Հայորդիները*, Պէրուր, Տպ. Ատլաս, 1955, էջ 752-53):
- 3 Միհրան Մէֆէրեան, «Տարօնեցի Յեղափոխական Քօլօզ». *Արարատ*, 1956 Դեկտ. 21-28, (7 շաբ.). նաեւ՝ Ա.օ, *Գէորգ Չաւուշ*, հրատ. «Յեղափոխական Ալպոմ»ի, Պէրուր, Տպ. Սեւան, 1972, էջ 26-60:

- 4 «Աւօ (Աւետիս Գասպարեան)», *Հնչակ*, 1902 Նոյ. 1. Նաեւ՝ Աւօ, էջ 53 եւ 79:
- 5 Գեորգ Չաւուշ, «Գեորգ Չաւուշի Ինքնակենսագրութիւնը», *Պրօշակ*, 1914 Սեպտ.-Դեկտ., թիւ 242: Գ.Չաւուշի յուշագրութիւնը վաւերական նկատելով այստեղ զայն իբրեւ հիմք կ'օգտագործենք:
- 6 Մեպուհ, «Գեորգ Չաւուշի Փախուստը Բանտէն, Աւոյի Պատմութիւնը», «Յրոնքցի Մուրատ Պետրոսեան», Հալէպ, 1929, հրատ. «Տարօն-Մասուն «Մուրատի Ֆօնտ» Յանձնախումբի», էջ 148-158:
- 7 Գեորգ Չաւուշ, «Գեորգ Չաւուշի Ինքնակենսագրութիւնը»:
- 8 «Յրոնքցի Մուրատ Պետրոսեան»..., էջ 156:
- 9 Մուրատ, «Սասունցի Գեվօն Շողովորդի Չաւակը», *Հնչակ*, 1907 Յուլիս:
- 10 Հրաչ Տասնապետեան, *Ռոստոմ-Նամականի*, հրատ. ՀՅ Դաշնակցութեան, Պէրոյթ, Տպ. Համազգային Վ. Սէթեան, 1999, էջ 229:
- 11 *Հնչակ*, 1895 Օգոստոս, «Ցուցակ Արձակուած քաղաքական Յանցաւորներին»: Տամատեանի կողքին ազատ կ'արձակուին Արթիւր Օհանջանեան (Պարսկաստան-Վան գիծին վրայ, ֆետայական խումբ մը առաջնորդելու պահուն ձերբակալուած Չիբուխլու գիւղին մէջ), Մարգար Վռամեան՝ Ատոմ (Պոլսոյ, Փոքր Հայքի եւ Սամսունի յեղափոխական գործիչ, դատապարտուած 15 տարուան՝ Պոտրումի բանտը), Անտոն Ռշտունի (Փոքր Հայքի գործիչ, Անգարայի յայտնի դատավարութեան մահուան դատապարտուած, ապա վճիռի մեղմացումով՝ 15 տարուան բանտարկութեան, Պոլսոյ կէդր. Բանտը) եւ Պետրոս Մարիմեան (Տրապիզոնի գործիչ, անորոշ ժամանակով քստրուած Աքիայի բերդարգելաբանը): Տարօրինակն այն է, որ ազատ արձակուած այս յեղափոխականներէն ոմանք անմիջապէս չեն հեռանար Թուրքիայէն եւ Պոլսոյ մէջ, խաֆիէներու «քիթին տակ», տարիէ մը աւելի կը շարունակեն իրենց կուսակցական գործունէութիւնը, Սեպտ. 16ին Պոլսոյ մէջ կը կազմակերպեն Պապ Ալիի յայտնի ցոյցը եւ միայն անկէ յետոյ է որ փախստական միջոցներով կը հեռանան Պոլսէն:
- 12 *Երիտասարդ Հայաստան*, 1906, Սեպտ. 12:
- 13 «Արձանագրութիւն Հնչակեան Կուսակցութեան Անդրկովկասի Եւ Ռուսաստանի Մասնաճիւղերի Պատգ. Շողովի». Հայաստանի Ազգային Արխիւ. Ֆ.1456:
- 14 «Ատենագրութեան Տետրակ Հնչակեան Կեդր. Վարչութեան», 51րդ եւ 85րդ նիստեր՝ 1904 Փետր. 26 եւ Յունիս 18 (Հնչ. Արխիւ, Պէրոյթ):
- 15 Այդ շրջանին ՄԴՀԿ Կեդր. Վարչութեան նամակագրութեան ձեւը այնպիսին էր որ իւրաքանչիւր յոյսած նամակ հարազատօրէն կ'ընդօրինակուէր նամակներու ընդհանուր տետրակին մէջ՝ իր հերթական համարակալումով եւ հասցէատիրոջ անունով: Այնպէս որ այս թուանշանը եւ կողքի հասցէատիրոջ անունը, բնականաբար իսկական նամակին վրայ չեն երեւիր:
- <sup>16</sup> Այս նամակները կը մնան անգտանելի:
- 17 Տե՛ս՝ յաջորդ նամակը եւ անոր ծանօթագրութիւնները:
- 18 Յարութիւն Ճանկիւլեան, ծնած Վան 1856ին: Երիտասարդ տարիքին Վանի մէջ կ'անդամակցի «Սեւ Խաչ» յեղափոխական կազմակերպութեան: Կը պանդխտէ Պոլիս եւ Մեծն Մուրատին հետ մաս կը կազմէ յեղափոխական կազմակերպութեան մը Վարիչ Մարմին: 1890ին, այս կազմակերպութիւնը իր ամբողջ կազմով կը միանայ ՄԴՀԿի: 1890 Յուլիս 15ին, Մուրատի հետ կը գլխաւորէ Գում

Գափուի ցոյցը: Կը ձերբակալուի եւ վեց տարի կ'աքսորուի Աքիայի բերդակալանք: Ազատ արձակուելէն ետք կը շարունակէ իր ազգայինկուսակցական գործունէութիւնը: Կը դառնայ հայ յեղափոխական կուսակցութիւններու համագործակցութեան ջերմ ջատագով մը: Կը նուիրուի իր զինակիցին ազատութեան գործին: Այդ մասին, 1913ին Պոլսոյ մէջ հրատարակած իր յուշագրութեան մէջ կը գրէ. «Կար նաեւ ուրիշ կարեւոր եւ կենսական խնդիր մ'ալ եւ պէտքը կը զգայի ընկերական պարտականութիւնս կատարել:...Միրելի ընկերս Մուրատը, որ դեռ կը հեծէր Տրիպոլիսի բանտին մէջ, պէտք էր զինք ազատել (փախցնել) բանտէն: Գործը ինքնին վտանգալից էր, բայց ես յօժար էի այդ վտանգն յանձն առնել, Ափրիկեան Տրիպոլիս երթալ ու զինք փախցնել...: Մուրատի քոյրը՝ օր. Հայկանուշ Աղեքսանդրիա էր, իրեն ղիմեցի՝ Մուրատի հասցէն առի եւ իսկոյն սկսայ թղթակցիլ» (Յիշատակներ Հայկական Ճգնաժամէն, Պէյրութ, թերթօն Արարատ թիւ 34, էջ 529): Օսմանեան Սահմանադրութենէն ետք, Ճանկիւլեան կը վերադառնայ Պոլիս, կը ստանձնէ ազգային եւ կուսակցական պաշտօններ: Մեծ Եղեռնին, հայ մտաւորականներու հետ կը տարագրուի Այաշ: Տոքթ. Տաղաւարեանի, Ակնունիի, Խաժակի, Ռուբէն Զարդարեանի հետ կ'անջատուի ընդհանուր խումբէն եւ Տիգրանակերտի ճամբուն վրայ բոլորին հետ կը նահատակուի (Տոքթ. Եղիկ Ճերէճեան, «Յարութիւն Ճանկիւլեան» Արարատ Բացարկի, 2013 Ապրիլ 24):

19 1896ին՝ իր Ա. Համագումարին, ՄԴՀԿ կը պառակտուի երկու հատուածներու: Կուսակցութեան Բ. Համագումարը (Լոնտոն, 1901 Հոկտեմբեր), պառակտուած հատուածէն՝ Վերակազմեալներէն, վերամիացման բանակցութիւններ սկսելու հրաւեր կը ստանայ: Համագումարը անմիջապէս կ'ընդհատէ իր աշխատանքները, կ'ընդառաջէ հրաւերին եւ նոյն ամսուն, երկու հատուածներու պատգամաւորներով կը հրաւիրուի Գ. Համագումարը, որ կը տեւէ մինչեւ 1902 Մարտ: Շարունակուող վէճերուն պատճառով, կ'որոշուի ծնունդ տալ «Գործադիր Յանձնախումբ»ի մը, երկու կողմերը ներկայացնող երեքական ներկայացուցիչներով, որ մինչեւ յաջորդ համագումար պատրաստէ հաշտեցման նախագիծ մը: Վէճերը կը շարունակուին նաեւ «Գործադիր Յանձնախումբ»ին մէջ եւ Վերակազմեալ հատուածին ներկայացուցիչները կը հետանան անկէ: Մնացեալ երեք անդամները, կեդրոնական վարչութեան իրաւասութիւններով կը շարունակեն աշխատանքը մինչեւ յաջորդ համագումարը (Լոնտոն, 1903 Սեպտեմբեր): Այս պատճառով է որ, ընկալեալ սովորութեան հակառակ, փոխան Կեդրոնական Վարչութեան, նամակին տակ ստորագրուած է Գործադիր Յանձնախումբ:

20 Խօսքը կը վերաբերի Մուրատին:

21 Նամակին մէջ Մուրատի հիւանդութիւնը պէտք է հասկնալ անոր աքսորը. Բժիշկները՝ աքսորէն փախուստի անոր օգտակար եղողները, հիւանդութենէն բուժումը աքսորէն փախուստը, բուժման մեթոտները՝ փախուստի միջոցները:

22 Հնչակեան: Խօսքը կը վերաբերի հնչակեան զոյգ հատուածներու վերամիացման փորձին:

23 Իմա՝ յեղափոխական:

24 Յարութիւն Ճանկիւլեան:

- 25 Իրականության մեջ, Մուրատ Պոլսոյ բժշկական ուսումնարանի բ. տարւան ուսանող էր, երբ ամբողջապէս կը միանայ յեղափոխական շարժման: Այստեղ սակայն, խօսքը փոխաբերաբար կը նշանակէ «դուք էլ յեղափոխական էք»:
- 26 Գաղտնապահական պատճառներով նամակագիրի ինքնություն նշուած չէ:
- 27 *Երիտասարդ Հայաստան*, 1906 Սեպտ. 12:
- 28 Մուրատ, «Մասունցի Գէլօն»:
- 29 Մեր բոլոր պրպտումները՝ երեսան հանելու Յակոբ Իսկենտերեանի ինքնությունը, անցան ապարդին:
- 30 Պ. Տեփոյեան, *Միհրան Տամատեան*, հրտ. «Զարթօնք» թիւ 52, Պէյրուք, Տպ. Զարթօնք, 1964, էջ 110: Էջատակի այս հաստատումին համար, Տեփոյեան ոչ մէկ սկզբնաղբիւր կը նշէ:
- 31 Սովսէս Նահապետեան, ծնած Սեբաստիա: Կ'աւարտէ Խարբերդի Եփրատ Գոլէճը: «Աշխոյժ եւ վառ ուժ մը» (Առաքել Պատրիկ, *Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ, Ա. Հտր.*, Պէյրուք, Տպ. Մշակ, 1974, էջ 646): Կը նուիրուի յեղափոխության: Մատնության հետեւանքով կ'աքսորուի Ափրիկեան Թրիփոլիի Ֆիզան գիւղը: Աքսորէն ազատելէն ետք կը շարունակէ իր յեղափոխական գործունէութիւնը: Օսմանեան Սահմանադրութենէն ետք կը նշանակուի Փոքր Հայքի կուսակցական գործիչ եւ որպէս այդ շրջանի պատգամատր կը մասնակցի ՄԴՀԿ Զ. Համագումարին (Պոլիս, 1909 Յուլիս): Կը հաստատուի Պուլկարիա եւ կը պաշտօնավարէ Պազարճըքի Ազգ. Կարժ.ին մէջ, ապա կը գաղթէ Ամերիկա:
- 32 Արսէն Կիտուր, *Պատմություն ՄԴ Հնչակեան Կուսակցության, Բ. Հտր.*, Պէյրուք, Տպ. Շիրակ, 1963, էջ 261:

THREE UNPUBLISHED LETTERS PERTAINING TO  
THE ESCAPE OF MURAD FROM EXILE  
(Summary)

Yeghig Djeredjian  
jerejianyeghia@hotmail.com

Medzen Murad, Hamopartsoum Boyaydjain (born in Hadjin in 1867, hanged in Cesaria in 1915) is one of the most renowned and popular figures of the Armenian Liberation movement. His revolutionary life starts in Constantinople in 1890, and he is one of the key organizers of the Kum Kapu vigil. In 1892 Murad is the central figure of the Sasun revolutionary movements and heads the first rebellion of Sasun in 1893-94.

The authorities imprison and torture him in various prisons in Turkey. In 1896 he is exiled to Tripoli in Libya, but in 1906 he escapes from prison.

During his exile the Social Democrat Henschag Party 5<sup>th</sup> convention elects Murad as a member of its Central Committee. The author underlines that this was an unprecedented and unrepeatable act in the history of the Armenian revolutionary movement and questions what had made Murad's colleagues so sure that he would escape prison.

The author notes that Murad was very popular and enjoyed the love of the Armenian nation; there are examples of several groups that worked towards his liberation. The author discloses three letters from the Party archives, written by the Party Central Committee. One of the letters is directly addressed to Murad while he was in prison in Libya in 1902. Finally, using diverse data, the author paints a detailed picture of the escape of Murad from prison, giving the two theories of the escape.